*խեցելքս եւ բոլոր լուսաւորչածին ժողովրդքս եւ Ալթի Ճէմայէթ կոչեցելքս ծանուցանեմք ձեզ ամենեցունցդ որք բնակելք էք ի Ս. Եջմ ի վանքն Սբ Յակոբայ. համայն Եպնաց, վրդպտաց Նազըրներաց եւ առ հասարակ միաբանից սբ Եջմի, զի զսելով զվախճան երանելի հօրն մերոյ սբ Եմյ Պտրք Թէոդորոս հոգիացել վպտին որ ի Թվին հայոց ռմժին եւ ի դեկտեմբերի ղին եւ ժողովեալ ի մայր եկեղեցի Սրբուհւոյ կուսին Մարիամու Աստածնին համահւնութ ՏՆ Յկբյ Աբն վպտին Սրբզնի հօրն մերոյ եւ կամակցութ ամենեցունցս ի տեղի նորին Սբ Եմյ պտրք ընտրեցաք զսբ Գէորգայ Եկն Աւգնրէց Տէր Մովսէս քհնյի Թոռն զՏէր Գրիգոր Աբյն եւ բարեհամբաւ վպտն որ քան մի ամաւ աստ առ մեզ գոլով գիտեմք եւ վկայեմք զխոհեմութէ եւ զհնճարեղու սորին. եւ մնւգ զի դուք գրել էիք ի մահսարական գիրն ձեր, թէ եթէ զմեր կամեցելն չկամենայք, մինչ ցյետին աբեղայն Սրբոյ Աթոռոյս մեզ հաճոյ է եւ ընդունելի, միայն թէ յօտարաց ոք մի լինիցի։ Արդ զսա կամիմք, զի իցէ յաջորդ եւ փոխնորդ գահին Սրբոց Յակոբեանց երջանիկ առաքելոյն որ ի յաթոռ նոյ Եջմի. ուստի որովհետեւ սիւնհոդոսս այս եղեւ կամօքն Այ եւ գործակցութ Հոգւոյն Այ զկնի այսորիկ ով ոք անհաւան լինիցի ընտրութե եւ կամաց մերոց, այնպիսին արտաքս անկել է ի սրբոյ ժողովոյս. վն որոյ եւ կամաւ մերով կնքեցաք զգիրս, ողջ լերուք։*